Կամ հրացեալ երկաթիւ կիզեցէք ձեռն զորայ։

Կամ 300 դամչի դան հարէք արձակեցէք զմայ։

Կամ 500 դահեկան երծաթ առէք 'ի դմանէ, և տուք 'ի տունս աղքատաց։

Կամ զամենայն աւուրս կենաց իւրոյ կացցէ 'ի բանտի մինչև 'ի մահ իւր։

Յետ այսպիսի կատարելոյ և ելանելոյ վրճռոյ, յայնժամ մեղաւորն՝ կապանօք յանձնեսցի 'ի ձեռն զօրագլխի և դահճի, զի յետ տասն և հինգ աւուր վճռոյ կատարեսցի վճիռ մեղաւորին։

Օրինակ երդմնելոյ 94 արանց։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Երդմնողն առաջի ատենի դատաւորաց դնելով աջու ձեռն 'ի վերայ Սրբոյ աւետարանի, ձախու ձեռն 'ի վերայ կրծից, և խոստովան լինիցի այսինքն խոստովանիմ առաջի Աստուծոյ և մարդկան և 'ի ատենի իշխանի (այս անուն), զի պահեսցեմ սիրտ և միտք և կարծիքն իմ անաբատ աննախանձաբար և որոնիցեմ անկողմնակալութեամբ եթէ երդմնողն դատաւոր և դատողքն ասիցեն դատիցեմ առանց կողմնակալութեամբ, և եթէ երկոտասան դատողն որ ընտրեցեալ 'ի մեղաւորէ լինիցի ջնուտ, կամ մահմետական, կամ